

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО СЕЛЬСКОГО
ХОЗЯЙСТВА
«АРМЛЕС»
ГОСУДАРСТВЕННАЯ
НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
Директор

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՆՏԱՌ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տնօրեն

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF
AGRICULTURE
“HAYANTAR”
STATE NON COMMERCIAL
ORGANIZATION
Director

Հ Ր Ա Մ Ա Ն

14.11.17թ. N 81

ք. Երևան

ԱՆՏԱՌՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 388-Ն որոշմամբ հաստատված «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության դրույթներով, բնափայտի մթերման ու փայտանյութի իրացման գործընթացը կանոնակարգելու, ինչպես նաև ոլորտում արձանագրված ապօրինի հատումները բացառելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղերի կողմից կնքվող՝

1) ծառուտի առուվաճառքի մասին պայմանագրի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) անտառատնտեսական աշխատանքների կատարման մասին պայմանագրի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) կլոր փայտանյութի առուվաճառքի պայմանագրի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի տնօրեններին՝

1) բնափայտի մթերման նպատակով ծառուտի առուվաճառքի, ինչպես նաև այլ անձանց կողմից անտառատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ ապահովել սույն հրամանի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում սահմանված պայմանագրերի կնքումը,

2) կլոր փայտանյութի իրացումն իրականացնել սույն հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված ձևի պայմանագրերի համաձայն,

3) բացառել առանց սույն հրամանի 1-ին կետով հաստատված պայմանագրերի առկայության բնափայտի մթերման նպատակով անտառօգտագործման դեպքերը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Ռ. Կարապետյանին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:



Մ.ՄԱՆՈՒԿՅԱՆ